ԳԱԳԻԿ ՄԿՐՏՉԻ ԱԲԵԼՅԱՆ

ԽՍՀՄ Ժողովրդական կոմիսարների խորհրդին կից
Ժողովրդատնտեսական հաշվառման վարչության պետ
(1931-1940թթ.)

Գագիկ Մկրտչի Աբելյանը ծնվել է 1903թ.-ին՝ Էջմիածին քաղաքում, գյուղացու ընտանիքում: 1911-1916թթ. սովորել է Էջմիածնի տարրական դպրոցում:

Դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Էջմիածնի ակադեմիան, որտեղ սովորել է ընդամենը մի քանի ամիս (դպրոցը փակվել է փետրվարյան հեղափոխության շարժառիթով):

1918թ.-ին՝ հոր մահից հետո, տեղափոխվել է ք.Երևան և աշխատել որպես վարձու բանվոր:

Գոյությունը պաշտպանելու նպատակով տեղավորվել է Էջմիածնի մանկատներից մեկում և միաժամանակ աշխատել հանրապետական մանկատների գրասենյակում, որպես ցրիչ:

1920թ. նոյեմբերին ընդգրկվել է Հայաստանի Լենինյան կոմունիստական երիտասարդական միության շարքերում և ակտիվորեն մասնակցել կուսակցական աշխատանքներին:

1922թ. նշանակվել է Հայաստանի Լենինյան կոմունիստական երիտասարդական միության Ապարանի շրջանային քարտուղար:

1926-1928թթ. աշխատել է ԽՍՀՄ Ժողովրդական կոմիսարների խորհրդին կից Կենտրոնական վիճակագրական վարչության Դիլիջանի շրջանային բաժնում:

1928-1931թթ. սովորել է Մոսկվայի պլանատնտեսագիտական ինստիտուտում և ստացել է տնտեսագետ-պլանավորողի որակավորում:

1931թ. աշխատել է Հայաստանի ԽՍՀ Ժողովրդատնտեսական հաշվառման վարչությունում, սկզբում որպես պլանային վիճակագրական բաժնի վարիչ, ապա՝ կառավարիչ:

1936-1941թթ. աշխատել է Երևանի Մոլոտովի անվան պետական համալսարանում, որպես վիճակագրության տեսության դասախոս և ամբիոնի վարիչ: 1947-1949թթ. եղել է հիշյալ համալսարանի պրոռեկտորը:

Գագիկ Աբելյանը պարգևատրվել է «Կովկասի պաշտպանության համար», «1941-1945թթ. Հայրենական մեծ պատերազմի ժամանակ ցուցաբերած բարեխիղճ աշխատանքի համար» և «1941-1945թթ. Հայրենական մեծ պատերազմի ժամանակ Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար շքանշաններով»:

Գագիկ Աբելյանը վախճանվել է 1959 թվականին: